



<<Նոր ժամանակի կրթություն>> ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Բնապահպանությունը
որպես մարդկության գլխավոր հիմնախնդիր,
կրթությունը, դաստիարակությունը դպրոցում

Առարկան՝ աշխարհագրություն

Հետազոտող ուսուցիչ՝ Հասմիկ Սարգսյան

Ուսումնական հաստատություն՝ ՀՀ Արարատի մարզի
Նորաշենի Ավետիք Իսահակյանի անվան միջնակարգ դպրոց

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն-----3

Հետազոտական աշխատանք----- 6

Կառավարության ռազմավարությունը-----8

ԱԶԲ փորձառությունը ու ռազմավարությունը-----13

ՀՀ բնապահպանական համակարգի արդի վիճակը և առկա հիմնախնդիրները-----16

ՀՀ բնապահպանական հայեցակարգի նպատակը և խնդիրները-----17

Միջազգային փորձը -----18

Անցման ուղիները-----24

Բնապահպանական-էկոլոգիական գիտության ձևավորումը -----25

Եզրակացություններ, առաջարկություններ-----29

Օգտագործված գրականության ցանկ-----31

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գոյատևելու համար մարդը ստիպված է փոխազդելու բնության վրա: Բնությունը մարդկանց համար հանդիսանում է թե բնակության վայր, և թե մշակութային, գեղագիտական և ռեկրեացիոն կարիքների բավարարման աղբյուր: Արտադրողական ուժերի զարգացմանը զուգընթաց մարդու փոխազդեցությունը բնության վրա ավելի ինտենսիվ բնույթ է կրում: Ժամանակակից գիտատեխնիկական հեղափոխության կամ զարգացումների (այսուհետ՝ ԳՏՀ) պայմաններում հանրության արտադրողական ուժերն անչափ աճել են, որի արդյունքում մարդկանց տնտեսական գործունեությունն իր մասշտաբներով և նշանակությամբ դարձել է համադրելի բուն բնության գործընթացների հետ:

Ժամանակակից ԳՏՀ-ի բացասական ազդեցությունները հանրություն և բնություն փոխհարաբերությունների վրա տեղի է ունենում ներքոհիշյալ երեք կարևոր ուղղություններով՝

- 1) բնական ռեսուրսների աղքատացում կամ գերշահագործում,
- 2) շրջակա միջավայրի աղտոտում,
- 3) բնական լանդշաֆտների փոփոխություն՝ հատկապես անթրոպոգեն լանդշաֆտների առաջացման հետևանքով:

Հայաստանում էկոլոգիական հիմնական խնդիրներն են հանդիսանում՝

- 1) կենսական նշանակության ջրհավաք ավազանների ու գերխոնավ տարածքների քայքայումը,
- 2) բնական ռեսուրսների, մասնավորապես, Սևանա լճի ջրհավաք ավազանի անարդյունավետ կառավարումը, գերշահագործումն ու աղքատացումը, բնական ռեսուրսների հասանելիության անհավասարությունը, անտառների ու հողերի դեգրադացիան, անապատացումը,
- 3) կենսաբազմության կրճատումը

4) շրջակա միջավայր արտանետումների ու արտահոսքերի սահմանային թույլատրելի չափաքանակների գերազանցումը,

5) վտանգավոր նյութերի ու թափոնների ոչ պատշաճ գործածությունը,

6) բնական ու տեխնածին աղետները,

7) շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մոնիթորինգի ոչ լիարժեքությունը, հասարակության բնապահպանական հարցերի վերաբերյալ թերի կրթվածությունն ու անբավարար իրազեկվածությունը:

Գլոբալ և (կամ) տարածաշրջանային մասշտաբով բնապահպանական հիմնական խնդիրներն են հանդիսանում

1) կլիմայի գլոբալ փոփոխությունները,

2) օզոնային շերտի քայքայումը,

3) մեծ հեռավորությունների վրա օդի, ջրերի անդրսահմանային աղտոտումն,

4) արդյունաբերական վթարների անդրսահմանային ներգործությունները,

5) հողերի դեգրադացիան (անապատացում, աղակալում, էռոզիա և այլն),

6) կենսաբազմազանության առանձին տեսակների անհետացման վտանգը:

Ժամանակակից հայաստանյան տնտեսության վիճակն ավելի է խորացնում բնապահպանական հիմնախնդիրները: Առկա է բնապահպանական իրավիճակի վատթարացման լուրջ վտանգ, որը պայմանավորված է ձեռնարկությունների կողմից տեխնոլոգիական կարգապահության չպահպանման, արտադրական վթարների աճի, ֆինանսական դժվարությունների պատճառով բնական ռեսուրսների վերարտադրության և պահպանության ծրագրերի անհրաժեշտ ծավալով չիրականացման հետ:

Բնապահպանական իրավիճակի արմատական փոփոխությունները երկրում հնարավոր է միայն ակտիվ բնապահպանական քաղաքականության իրականացման

միջոցով, որն ենթադրում է բնօգտագործման և շրջակա միջավայրի պահպանության ոլորտում կառավարման տարբեր մակարդակներում նպատակների հասանելիությունն ապահովող միջոցառումների ամբողջական համակարգի առկայություն:

ՆՊԱՏԱԿԸ և ԽՆԴԻՐՆԵՐԸ

Այդ գիտակցությամբ էլ մարդիկ ամբողջ աշխարհում լուրջ ջանքք են գործադրում Հետևությունը մեկն է՝ Երկրի բնական հարստությունները գնալով կրճատվում են, իսկ կրճատման տեմպերը՝ ավելի ու ավելի արագանում:

Մարդու սաստկացող ներգործությունը բնության վրա արտահայտում է ոչ միայն բնական ռեսուրսների կրճատումով: Այն ունի իր երկրորդ կողմը ևս: Դա բնական միջավայրի աստիճանական վատթարացումն է, դեգրադացիան:

Բնական միջավայրի հետագա վատթարացումը կանխելու և մարկությանը փրկելու համար:

Այսպսի ցուցանիշ պետք է համարվի բնակչության բարեկեցության այնպիսի բարձրացումը, որն ուղեկցվում է բնական միջավայրի բարելամամբ և ռեսուրսների խնայողական օգտագործմամբ: Այդ դեպքում միայն մարդկային հասարակությունը կունենա կայուն զարգացում:

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Բնապահպանական խնդիրներ

Հայաստանը Բազմաթիվ փոխկապակցված բնապահպանական խնդիրներ առջև է կանգնած: Դրանցից առավել զգալիներն են ջրի և օդի աղտոտվածությունը, անտառային տարածքի նվազումը, հողերի դեգրադացիան, լանդշաֆտի փոփոխությունները, կենսաբազմազանության վտանգները, բնական աղետները և կլիմայի փոփոխության հետևանքները:

1.Ջրի և օդի աղտոտվածություն: Ջրի և օդի աղտոտվածությունը լուրջ բնապահպանական խնդիր է Հայաստանում: Դրա հիմնական պատճառներից մեկը քաղաքային թափոնների վատ կառավարումն է:

Բազմաթիվ երկրորդային քաղաքների ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքները պատշաճ պահպանման պակասի հետևանքով դարձել են քայքայված: Երկրում կեղտաջրերի մաքրման մի քանի գործող կայանների պայմաններում, քաղաքային կեղտաջրերի մեծ մասը բաց է թողնվում գետեր առանց պատշաճ մաքրման: Հայաստանում չկա որևէ սանիտարական աղբավայր, և կոշտ թափոնները սովորաբար տեղափոխվում են բաց աղբանոցներ, դրանցից որոշները գետերի ափամերձ երկայնքով: Այդ աղբանոցներում թափոնները սովորաբար այրվում են, թունավոր նյութեր արտանետելով մթնոլորտ: Գյուղատնտեսությունը (մասնավորապես, բուսաբուծությունում թունաքիմիկատների ոչ պատշաճ օգտագործումը), տրանսպորտը, հանքարդյունաբերությունը, հանքագործությունը և քիմիական արդյունաբերությունը ջրի և օդի աղտոտվածության մյուս հիմնական աղբյուրներն են:

2.Անտառային տարածքի նվազում, հողերի դեգրադացիա և լանդշաֆտի փոփոխություններ: Անցած երկու տասնամյակների ընթացքում Հայաստանում անտառածածկույթը զգալի նվազել է, հիմնականում վառելիքայտի հատումների, առևտրային նպատակով փայտանյութի հավաքման և բացահանքերի շահագործման պատճառով: Վառելիքայտի համար անօրինական հատումները լայնորեն

տարածված էին 1990-ականների էներգետիկ ճգնաժամի ընթացքում: Այն դեռևս հաճախ է հանդիպում՝ անտառների թույլ պաշտպանության և այլ վառելիքի հարաբերականորեն բարձր ծախսերի պատճառով: Անտառային տարածքի նվազումը պատճառում է տնկիների և կենդանիների բնական միջավայրի կորուստ, օդի վատ որակ, հողերի դեգրադացիա, էրոզիա և սողանքներ ու լանդշաֆտի փոփոխություններ: Հողերի դեգրադացիայի և լանդշաֆտի փոփոխությունների պատճառ են նաև արոտավայրերի չկանոնակարգված օգտագործումն ու գերարածեցումը, ինչպես նաև գյուղատնտեսությունում թունաքիմիկատների օգտագործման հետևանքով հողերի աղտոտվածությունը: Լանդշաֆտի փոփոխությունների այլ պատճառներն են հանքերի պոչամբարները, կոշտ թափոնների չկարգավորված հեռացումը և գոտիավորման կանոնների խախտումները:

3.Վտանգներ կենսաբազմազանությանը.

Չնայած փոքր տարածքին, Հայաստանն ունի հարուստ կենսաբազմազանություն, էկոհամակարգերի մեծ բազմազանությամբ: Հարավային Կովկասում առկա գրեթե բոլոր բուսատեսակները կարելի է գտնել Հայաստանում: Սևանա լիճը, որը գտնվում է Հայաստանի կենտրոնական մասում, Կովկասի ամենախոշոր լիճն է և աշխարհում քաղցրահամ բարձրադիր խոշոր լճերից մեկը: Այն ունի ինքնատիպ ֆաունա:

4.Բնական և տեխնոլոգիական վտանգներ. Մասնակիորեն որպես լեռնային տեղանքի և դիրքի առումով աշխարհի սեյսմիկ ամենակտիվ տարածաշրջաններից մեկում գտնվելու հետևանք, Հայաստանն կանգնած է բնական աղետների բարձր ռիսկի առջև, ինչպիսիք են՝ երկրաշարժերը, հեղեղումները, սողանքները և երաշտները: Բնական աղետների «թեժ կետերի» վերաբերյալ ռիսկերի գլոբալ վերլուծությամբ՝ Հայաստանը բազմակի բնական աղետների առավել ենթակա 60 երկրների թվում է: Հայաստանի բնակչության ավելի քան 80%-ը խոշոր աղետների ազդեցության տակ է, իսկ ավելի քան 30%-ը՝ հաճախակի աղետների:⁷ 2013թ. դեկտեմբերին նշվեց Սպիտակի երկրաշարժի 25- րդ տարելիցը (6.9՝ Ռիխտերի սանդղակով), որին զոհ գնաց 25,000 մարդ (այդ թվում՝ 6000 դպրոցական), վնասվածքներ ստացան 15,000-ը և կացարանից զրկվեցին 517,000-ը:⁸ Չնայած Հայաստանի ատոմակայանը համարվում է անվտանգ,

այն զգալի բնապահպանական ռիսկեր է առաջացնում, քանզի չունի զապման կառուցվածք և տեղակայված է սեյսմիկ ակտիվ:

5.Կլիմայի փոփոխության հետևանքները.Կլիմայի փոփոխությունն, ակնկալվում է, որ կունենա անբարենպաստ բնապահպանական, տնտեսական և սոցիալական հետևանքներ Հայաստանի համար: Հետազոտություններից մեկի համաձայն, մինչև 2100թ. կլիմայի փոփոխությունը Հայաստանում կհանգեցնի միջին ջերմաստիճանի բարձրացմանը Ցելսիուսի 1.7 աստիճանով և տեղումների քանակի նվազմանը մոտ 10%-ով:

Որպես հետևանք, կաճի չորայնությունը, կարագանա անապատացումը, կնվազեն արոտավայրերը, և Սևանա լիճ ջրի հոսքը կնվազի 15%-ով:

Արդյունքում, բուսաբուծությունը գնահատված է, որ կնվազի 8-14%-ով, անասնազլխաքանակը՝ 30%-ով, և կաճի սիրտ-անոթային և աղիքային հիվանդությունների տարածվածությունը:

Կառավարության ռազմավարությունը

Հայաստանի զարգացման ռազմավարություն 2025-ը, կառավարության երկարաժամկետ զարգացման տեսլականը, սահմանում է, որ տնտեսական աճի խթանման միջոցառումները պետք է հնարավորինս կապակցվեն դրան հարակից բնապահպանական ռիսկերի նվազեցման միջոցառումների հետ: Ծրագիրը նախատեսում է լայնընդգրկուն միջոցառումներ՝ հզորացնելու բնապահպանական կառավարումը, նվազեցնելու ջրի, օդի և հողի ատոտվածությունը, պայքարելու անտառային ծածկույթի նվազման և հողերի դեգրադացիայի դեմ ու պահպանելու Հայաստանի բնական լանդշաֆտն ու կենսաբազմազանությունը: Մասնավորապես, էլ-կառավարում է ներդրվելու բնապահպանական կառավարման մեջ նվազեցնելու այս ոլորտում կոռուպցիան: Վերանայվելու են տեխնիկական կանոնակարգերն ու ստանդարտները, ինչպես նաև բնօգտագործման վճարները՝ բարձրացնելու էներգա և ռեսուրսա-խնայող տեխնոլոգիաների ներդրման, վերամշակված նյութերի

օգտագործման, արդյունաբերական թափոնների նվազեցման և էկո ապրանքների արտադրության խթանները: Մշակվելու և ներդրվելու են բնապահպանամետ բիզնես պրակտիկայի և «կանաչ» նորամուծությունների խթանման մեխանիզմներ:

Ջրի և օդի աղտոտվածությունը նվազեցնելու և բնական լանդշաֆտն ու կենսաբազմազանությունը պաշտպանելու համար, կամրապնդվեն քաղաքային և արդյունաբերական թափոնների կառավարումը, տարածական և լանդշաֆտային պլանավորումը ու արգելավայրերի կառավարումը (հատկապես դրանց պահպանումը): Ի լրումն, զարգացման գործընկերների աջակցությամբ կվերանորոգվեն ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերն ու ռոռզման ենթակառուցվածքները՝ նվազեցնելու ջրի աղտոտվածությունն ու ապահովելու ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործումը: Կզարգացվի հանրային էլեկտրատրանսպորտը և կիրականացվեն ավտոտրանսպորտային արտանետումները նվազեցնող այլ միջոցառումներ՝ նվազեցնելու օդի աղտոտվածությունը: Կբարձրացվի ապօրինի անտառհատումների դեմ պայքարի արդյունավետությունը և կիրականացվեն անտառվերականգնման միջոցառումներ: Կընդլայնվի վերականգնվող էներգիայի օգտագործումը և կավելացվի էներգաարդյունավետությունը (մասնավորապես՝ էներգիայի արտադրության, տեղափոխման և բաշխման ակտիվների վերականգնման և արդիականացման միջոցով) դիմագրավելու կլիմայի փոփոխությունը և բարձրացնելու երկրի էներգետիկ անվտանգությունը:

Նոր կառավարության ծրագիրը, միջնաժամկետ գործողությունների ծրագիրը թվարկում է այն միջոցառումները, որոնք կառավարությունը նախատեսում է իրականացնել տարբեր բնագավառներում: Բնական միջավայրի պաշտպանության միջոցառումները ներառում են՝ բնական պաշարների օգտագործման նկատմամբ պետական հսկողության ուժեղացումը, օդի, ջրի որակի և թափոնների մշակման համար բարձր ստանդարտների սահմանումը, օդի աղտոտվածության նվազեցումը, կեղտաջրերի մաքրման առկա կայանների վերականգնումն ու նորերի կառուցումը, բնական լանդշաֆտի և կենսաբազմազանության պաշտպանությունը, կլիմայի

փոփոխության ազդեցության մեղմացումը (ներառյալ՝ վերականգնվող էներգիայի ավելի շատ օգտագործումը) և դրան հարմարվելը: Ծրագիրը սահմանում է, որ Կառավարությունն ավելի շատ կօգտագործի պետական-մասնավոր համագործակցությունը բնապահպանամետ տեխնոլոգիաների ներդրման և կանաչ տնտեսության զարգացման համար: Կառավարությունը նախատեսում է իրականացնել Սևանա լճի ձկնային պաշարների վերականգնման ծրագիր և հիմնել կենսոլորտային արգելավայր Սյունիքի մարզում:

ԱԶԲ փորձառությունն ու ռազմավարությունը

1.Նախորդ ծրագիրը: Ասիական զարգացման բանկին (ԱԶԲ) 2005թ. անդամակցելուց հետո, ԱԶԲ-ն հաստատել է ֆինանսավորում բազմաթիվ ծրագրերի համար, որոնք առնչվում են բնապահպանական խնդիրներին: 2007թ. ԱԶԲ-ն հաստատեց \$36.0 միլիոն վարկ ֆինանսավորելու Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի ծրագիրը: 12 2012թ. սկզբին վերականգնվել և արդիականացվել էին 21 քաղաքների և 97 գյուղերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը, իսկ ծրագիրը համարվել էր հաջողված: 2012թ. ԱԶԲ-ն հաստատեց ծրագրի համար \$40.0 միլիոն լրացուցիչ ֆինանսավորումը: Լրացուցիչ ֆինանսավորումը նախատեսված է նպաստելու շրջակա միջավայրի պաշտպանությանը Հայաստանում, օգնելով վերականգնել և ընդլայնել ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը 18 քաղաքներում և 92 գյուղերում, ներառյալ՝ 8 քաղաքներ և 63 գյուղեր, որոնք սկզբնապես ընդգրկված չէին ծրագրում (ծանոթագրություն 13): 2011թ. հաստատեց Հայաստանում Կայուն քաղաքային զարգացման ներդրումային ծրագրի (ԿՔՉՆԾ) ֆինանսավորման \$400 միլիոն բազմափուլ ֆինանսավորման գործիքը: ԿՔՉՆԾ կօգնի նվազեցնել ածխածնային գազի (CO2) արտանետումները և օդի աղտոտվածությունը Հայաստանում՝ բարելավելով տրանսպորտային ենթակառուցվածքն ու ծառայությունները 12 քաղաքային բնակավայրերում, ներառյալ՝ Երևանը:

2.Պետական հատվածի ապագա վարկավորումը: ԱԶԲ-ն կաջակցի կառավարության՝ Հայաստանի տնտեսական աճի բնապահպանական կայունությունը երաշխավորելու

ջանքերին: Բնապահպանական կայունության դրույթները կշեշտադրվեն Հայաստանում ԱԶԲ գործառնություններում՝ ծրագրերի նախագծման միջոցով ու բնապահպանական անվտանգության պահանջներին համապատասխանության բարձրացմամբ: ԱԶԲ-ն կինտեգրի ջերմոցային գազերի արտանետումների նվազեցման միջոցառումները ենթակառուցվածքային ծրագրերի նախագծերում և կընդլայնի վերականգնվող էներգիայի օգտագործումը, բարձրացնելով երկրի ներդրումը կլիմայի փոփոխության դեմ պայքարում: ԱԶԲ աջակցությունը կուղղորդվի ոչ միայն կառավարության առաջնահերթություններին, այլև սերտորեն կհամակարգվի զարգացման այլ գործընկերների կողմից տրամադրվող աջակցության հետ, բացառելու կրկնություններն ու ապահովելու սիներգիան: Տրանսպորտ, էներգետիկա և քաղաքային զարգացում: Տրանսպորտի ոլորտում ԱԶԲ-ն կշարունակի ԿԲԶՆԾ ֆինանսավորումը և հյուսիս-հարավ միջանցքի և երկրորդային քաղաքները կապող նոր տրանսպորտային ծրագրերին աջակցությունը, որոնք կօգնեն նվազեցնել CO2 -ը և օդի աղտոտվածությունը: Էներգետիկայի ոլորտում ԱԶԲ-ն կֆինանսավորի հիդրոէներգետիկ ակտիվների վերականգնումն ու արդիականացումը և էներգիայի հաղորդման և բաշխման ցանցերը՝ ավելացնելու էներգաարդյունավետությունը: ԱԶԲ-ն կաջակցի նաև կառավարության վերականգնվող էներգիայի օգտագործման ընդլայնման ջանքերին՝ կլիմայի փոփոխության դեմ պայքարելու և երկրի էներգետիկ անվտանգությունը բարձրացնելու համար: Բացի այդ, ԱԶԲ-ն կօգնի կառավարությանն իրականացնելու իրավական, կարգավորման և ինստիտուցիոնալ բարեփոխումներ՝ ապահովելու համար հիդրոէներգետիկ ծրագրերի բնապահպանական կայունությունը և հեշտացնելու վերականգնվող էներգիայի օգտագործման մեջ մասնավոր հատվածի մասնակցությունը: Քաղաքային զարգացման բնագավառում, ԱԶԲ-ն կշարունակի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգման և ընդլայնման ֆինանսավորումը՝ նվազեցնելու ջրի աղտոտվածությունը: ԱԶԲ-ն կաշխատի կառավարության հետ մշակելու թափոնների կառավարման ազգային ռազմավարություններ և իրականացնելու կոշտ թափոնների կառավարման համապատասխան միջոցառումներ: Կառավարության հայցի

դեպքում, ԱԶԲ-ն պատրաստ կլինի ֆինանսավորել թափոնների կառավարման ներդրումները:

3. Գիտելիքային պրոդուկտներ և ծառայություններ: ԱԶԲ-ն կտրամադրի գիտելիքային ապրանքներ և ծառայություններ՝ ամրապնդելու բնապահպանական կառավարումը, խթանելու բնապահպանամետ տեխնոլոգիաները և զարգացնելու կանաչ տնտեսությունը: ԱԶԲ քաղաքականության վերլուծության և խորհրդատվական ծառայությունները կկենտրոնանան գործադիր և իրականացնող գործակալությունների կարողությունների հզորացման վրա՝ ներդրումային ծրագրերի բնապահպանական անվտանգության կիրառման համար:

Որպես առաջին քայլ, ԱԶԲ-ն մշակում է երկրի բնապահպանական անվտանգության շրջանակը, որը կհամապատասխանի ԱԶԲ Անվտանգության քաղաքականության փաստաթղթին (2009) և ազգային պահանջներին ու կաշակցի անվտանգության արդյունավետ նախագծմանն ու իրականացմանը: Օգնելու համար երկրին բարելավելու բնապահպանական կառավարումը և իրականացնելու միջազգային բնապահպանական համաձայնագրերով ստանձնած պարտավորությունները, ԱԶԲ-ն կներառի Հայաստանը շրջակա միջավայրի պաշտպանությանը վերաբերող տարածաշրջանային տեխնիկական աջակցության ծրագրերում:

4. Որպես տրանսպորտի ոլորտի երկարաժամկետ ռազմավարական պլանի մաս, ԱԶԲ-ն կխթանի մոտեցումը տրանսպորտային ծրագրերի նախագծերում: Կոշտ թափոնների կառավարման ռազմավարության և քաղաքականության մշակմանն աջակցությունը կխթանի լավագույն փորձը ինչպիսիք են “նվազեցում-վերաօգտագործում-վերամշակում” սկզբունքը այս գործողությունների համար աջակցության տրամադրումը հետագայում կքննարկվի կառավարության հետ:

5. Ի լրումն, ԱԶԲ-ն կաջակցի Հայաստանին ոչ միայն կլիմայի փոփոխության դեմ պայքարում, այլև դրան հարմարվելուն: ԱԶԲ-ն այն կանի շեշտադրելով կլիմայի փոփոխությանը հարմարվելը իր ներդրումային ծրագրերում, այնքանով որքան հնարավոր է, և տրամադրելով տեխնիկական աջակցություն բարձրացնելու երկրի

«դիմակայումը» կլիմայի տատանումներին ու փոփոխությանը: ԱԶԲ-ն կփորձի ներգրավել լրացուցիչ ֆինանսավորում կլիմայի փոփոխությանը վերաբերող ծրագրերի և գործողությունների համար մասնագիտացված հիմնադրամներից՝ ինչպիսիք են Մաքուր Տեխնոլոգիաների Հիմնադրամը, Կանաչ Կլիմայի Հիմնադրամը և Կանաչ Բնապահպանական Հիմնադրամը:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ ԵՎ ԱՌԿԱ

ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հայաստանում բնապահպանական համապատասխան քաղաքականություն իրականացվում է համապատասխան իրավական ակտերի և ծրագրերի միջոցով, այդ թվում՝

1) Օրենքների՝

ա. <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին>> (ընդունված է 1995 թվականի նոյեմբերի 20-ին),

բ. <<Սևանա լճի մասին>> (ընդունված է 2001 թվականի մայիսի 15-ին),

գ. <<Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման եվ օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագիրը հաստատելու մասին>>(ընդունված է 2001 թվականի դեկտեմբերի 14-ին),

դ. <<ՀՀ ջրային օրենսգիրք>> (ընդունված է 2022թ. հուլիսի 10ին),

ե. <<Զրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին>> (ընդունված է 2005թ. մայիսի 3-ին

զ. <<Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի մասին>> (ընդունված է 2006 թվականի նոյեմբերի 27-ին),

է. <<Բնության հատուկ պահպանող տարածքների մասին>>(ընդունված է 2006 թվականի նոյեմբերի 27-ին) և այլն,

2) ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացած ծրագրեր՝

ա. Սևանա լճի էկոլոգիական հավասարակշռության վերականգնման ծրագիր (1998թ.),

բ. Հայաստանում անապատացման դեմ պայքարի գործողությունների ազգային ծրագիր (2002թ.)

գ. Բնության հատուկ պահպանվող տարածքների պետական ռազմավարության և ազգային գործողությունների ծրագիր (2002թ.),

դ. Ապօրինի անտառհատումների հետ կապված խնդիրների լուծմանն աջակցող միջոցառումների գործողությունների ծրագիր (2004թ.),

ե. Ավտոտրանսպորտից վնասակար արտանետումների նվազեցման հայեցակարգ (2004թ.),

զ. ՀՀ շրջակա միջավայրի պետական մոնիտորինգի հայեցակարգ (2006թ.),

է. ՀՀ Ջրի ազգային ծրագիր (2006թ.),

ը. ՀՀ շրջակա միջավայրի պետական մոնիթորինգի հայեցակարգից բխող խնդիրների իրականացման միջոցառումների 2007-2011 թվականների ծրագիր (2007թ.)

թ. Շրջակա միջավայրի պահպանության Ազգային գործողությունների 2-րդ ծրագիր (2008 ժ. Կայուն Ջարգացման ծրագիր (2008 թ.),

ժա. ՀՀ բուսական և կենդանական աշխարհի պետական հաշվառման ծրագրեր (2009թ.),

ժբ. Բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման համակարգի հզորությունների ամրապնդման 2010-2013 թվականների ծրագիր, (2009թ.),

ժգ. ՀՀ կենդանական և բուսական աշխարհի պետական կադաստրի զարգացման 2010-2015 թվականների համալիր ծրագրերը (2009թ.),

ժդ. Բնապահպանական կրթության, դաստիարակության և իրազեկման ամբողջական և միասնական ազգային համակարգի ստեղծման հայեցակարգից բխող՝ 2011-2015 թվականների միջոցառումների ծրագիր (2010թ.),

ժե. Մի շարք բնապահպանական Կոնվենցիաներից բխող Հայաստանի Հանրապետության պարտավորությունների կատարման միջոցառումների ցանկը հաստատելու մասին (2011թ.),

Չնայած, որ գործողությունների ծրագրավորման մասով առաջընթացն ակնհայտ և տեսանելի է, սակայն պետք է նշել, որ իրականացվող քաղաքականության արդյունավետությունը դեռևս բավարար չի կարող գնահատվել ներքոհիշյալ նկատառումներով՝

1) չնայած Հայաստանն աստիճանաբար հրաժարվում է "Այժմ աղտոտիր, կմաքրենք հետագայում" սկզբունքից, սակայն այդ զարգացումները՝ պայմանավորված սոցիալքաղաքական իրավիճակով, խիստ դանդաղ են կատարվում և գործնականում բնապահպանությունը դեռևս գերակա չի համարվում:

2) այդ ծրագրերի հիմնական մասը ոլորտային բնույթ ունեն և չեն պարունակում ռազմավարական պլանավորման հիմնական տարրերը: Ավելին, գոյություն ունեցող ծրագրերի հիմնական մասը ներդաշնակեցված չեն թե՞ պետական ռազմավարական զարգացման ծրագրերի հետ, բացակայում են բնապահպանական խնդիրների ռազմավարական պլանավորման իրավական հիմքերը: Այդ ծրագրերի մշակմանը և իրականացմանը քաղաքացիական հասարակության և գործարար հատվածի մասնակցությունն անբավարար է և դրանց ներգրավումը ռազմավարական պլանավորման գործընթացում պատշաճ կերպով չի իրականացվում: Բացակայում է վերոգրյալ ծրագրերի իրականացման մոնիտորինգի և գնահատման համակարգը՝ դրանք մշակողների և իրականացնողների պատասխանատվությունը

հաշվետվողականությունը ապահովելու, ինչպես նաև այդ փաստաթղթերի թափանցիկությունը և հրապա

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հայեցակարգի նպատակն է՝ միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական խնդիրների ռազմավարական պլանավորման համակարգի ներդրումն ապահովող միջոցառումների մշակումը, որոնք նպատակաուղղված պետք է լինեն բնապահպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության կարևորագույն հետևյալ նպատակների իրագործմանը՝

- 1) ուժեղացնել պետության վերահսկողությունը շրջակա միջավայրի պահպանման նկատմամբ,
- 2) հիմնանորոգել կեղտաջրերի կենսաբանական մաքրման կայանները և կառուցել նորերը,
- 3) Սևանա լճի էկոլոգիական հավասարակշռության վերականգնման և պահպանության միջոցառումների իրականացումը,
- 4) ապահովել անտառապատման և անտառավերականգնման ծավալների հետագա աճը, անտառների ապօրինի հատումների կանխումը, անապատացման դեմ պայքարը, կենսաբանական և լանդշաֆտային բազմազանության պահպանումը, ավտոտրանսպորտից վնասակար նյութերի արտանետումների նվազեցումը, ջրի և անտառի ազգային ծրագրերի ամբողջական իրականացումը,
- 5) ընդլայնել բնության հատուկ պահպանվող տարածքների համակարգը և կատարելագործել դրանց կառավարման մեխանիզմները,
- 6) մշակել և կիրառել նոր մոտեցումներ հասարակության բնապահպանական իրազեկության բարձրացման և էկոլոգիական կրթության ու դաստիարակության հարցերում,

7) ուժեղացնել ընդերքի շահագործման, ինչպես նաև բնական պաշարների վերականգնման ու վերարտադրության նկատմամբ վերահսկողությունը,

8) ուշադրության կենտրոնում պահել բնական միջավայրի ռադիոակտիվ աղտոտման կանխարգելումը, վտանգավոր քիմիական ու ռադիոակտիվ նյութերի և թափոնների կառավարումը, բնական և մարդածին ազդեցությունների կանխատեսման համակարգի զարգացումը:

Հայեցակարգի խնդիրներն են.

1) Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական խնդիրների ռազմավարական պլանավորմանը առնչվող իրավահարաբերությունների կարգավորումը,

2) բնապահպանական ռազմավարական ծրագրերի (պլանների) իրականացման մոնիտորինգի և գնահատման համակարգի ներդրումը,

3) դրանք մշակողների և իրականացնողների պատասխանատվության և հաշվետվողականության սահմանումը,

4) ռազմավարական փաստաթղթերի թափանցիկության և հրապարակայնության ապահովումը,

5) միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական խնդիրների ռազմավարական պլանավորման համակարգի անցման հնարավորությունների բացահայտումը և այդ համակարգի ներդրման ապահովումը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ

Բնապահպանական արդյունավետ քաղաքականություն իրականացնելու նպատակով տարբեր երկրներում գործում են բնապահպանական խնդիրների ռազմավարական պլանավորման տարբեր համակարգեր և (կամ) մեխանիզմներ:

1. Եվրոպական Միություն (ԵՄ)

1) 2011 թվականի մայիսի 3-ին Եվրոպական Հանձնաժողովն ընդունել է կենսաբազմազանության պահպանության մինչև 2020 թվականի ռազմավարությունը, որն ուղղված է կանխարգելելու կենսաբազմազանության և էկոհամակարգային ծառայությունների կորուստները: Ռազմավարությունը ներառում է երկու հիմնական պարտավորություն: Առաջինը կանգնեցնել կենսաբազմազանության և էկոհամակարգային ծառայությունների կորուստները:

Երկրորդը՝ կենսաբազմազանության և էկոհամակարգային ծառայությունների վերականգնումը, որքանով դա հնարավոր է:

2) Ռազմավարությունով ամրագրված է նաև 2050 թվականի տեսլականը՝ բնական կապիտալը պահպանված է, պահպանված կենսաբազմազանությունը գնահատվում է որպես կարևոր ներդրում մարդկության բարեկեցության և տնտեսական աճի ապահովման գործընթացում:

2. Ռուսաստանի Դաշնություն

1) Ռուսաստանի Դաշնությունում բնապահպանական արդյունավետ քաղաքականություն իրականացնելու նպատակով Ռուսաստանի Դաշնության Նախագահի կողմից 2012 թվականի ապրիլի 28-ին հաստատվել է Ռուսաստանի Դաշնության մինչև 2030թ. պետական քաղաքականության հիմնադրույթները էկոլոգիական զարգացման բնագավառում, իսկ Ռուսաստանի Դաշնության վարչապետի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի կարգադրությամբ հաստատվել է վերոգրյալ քաղաքականության իրականացման գործողությունների ծրագիր:

2) Ծրագրով մինչև 2030 թվականը ժամանակահատվածի համար ամրագրված են հետևյալ ռազմավարական գործողությունները՝

ա. Շրջակա միջավայրի պահպանության նորմատիվա-իրավական ապահովման կատարելագործում, այդ թվում՝ էկոլոգիապես արդյունավետ տեխնոլոգիաների ներդրման նպատակով տնտեսվարող սուբյեկտների տնտեսական խթանման միջոցների նախատեսում, թափոնների երկրորդական օգտագործման և

օգտահանման, նախկին տնտեսական գործունեության հետ կապված շրջակա միջավայրին պատճառված վնասի վերականգնման գծով գործողությունների իրականացում,

բ. Շրջակա միջավայրի պահպանության ոլորտի կառավարման արդյունավետ համակարգի ձևավորում, մասնավորապես գործադիր իշխանության մարմինների իրավասությունների և համագործակցության շրջանակների ճշտումը,

գ. Միջազգային ստանդարտները հաշվի առնելով շրջակա միջավայրի պահպանության ոլորտի ազգային ստանդարտացման համակարգի զարգացումը,

դ. Բնական միջավայրի, բնական էկոհամակարգերի, կենդանական և բուսական աշխարհի օբյեկտների պահպանությունը,

ե. Խախտված էկոհամակարգերի վերականգնումը,

զ. Պետական էկոլոգիական մոնիթորինգի, բնական և տեխնածին արտակարգ իրավիճակների կանխատեսման համակարգերի կատարելագործումը, շրջակա միջավայրի պահպանության գիտական և տեղեկատվական-վերլուծական ապահովումը, ստեղծել բնապահպանական միջոցառումները արդյունավետությունը բնութագրող օբյեկտիվ ցուցանիշների համակարգ,

է. Էկոլոգիական մշակույթի ձևավորումը, էկոլոգիական կրթության և դաստիարակության զարգացում, քաղաքացիների, հասարակական կազմակերպությունների, բիզնեսհանրության մասնակցության ապահովումը շրջակա միջավայրի պահպանության հիմնախնդիրների լուծմանը,

թ. Շրջակա միջավայրի վիճակի մասին տեղեկատվության մատչելիության ապահովումը,

ժ. Միջազգային համագործակցության զարգացումը

3. Մայլա

1) Շրջակա միջավայրի պահպանության և զարգացման պլանավորման օրենքով (2010թ.) սահմանված է շրջակա միջավայրի պահպանության և զարգացման ռազմավարական պլանի մշակման պահանջ: Պլանը պետք է հենված լինի պլանավորման ինտեգրված համակարգի վրա, որը պետք է կարգավորի բնական ռեսուրսների կայուն օգտագործումը և կառավարումը, որը պետք է ապահովի տնտեսական զարգացման և շրջակա միջավայրի պահպանության միջև ինտեգրումը:

4. Ղազախստանի Հանրապետություն

1) Ղազախստանի Հանրապետության շրջակա միջավայրի պահպանության նախարարության 2011 -2015թթ, ռազմավարական պլանում ամրագրված է՝ Նպատակը-ստեղծել պայմաններ շրջակա միջավայրի պահպանության, վերարականգնման, բարելավման համար, ինչպես նաև ապահովել Ղազախստանի Հանրապետության անցումը կայուն զարգացման՝ ներկա և ապագա սերունդների պահանջմունքների ապահովման համար:

5. Էստոնիա

1) Շրջակա միջավայրի պահպանության ոլորտում մինչև 2030 թվական ժամանակահատվածի համար ռազմավարությունը ներկայացնում է իրենից շրջակա միջավայրի պահպանության հետ առնչվող գործունեության ոլորտների զարգացման ռազմավարություն, որը ղեկավարվելով Էստոնիայի կայուն զարգացման սկզբունքներից հանդիսանում է կիրառական ռազմավարություն շրջակա միջավայրի ոլորտի հետ առնչվող բոլոր այլ ոլորտների զարգացման ծրագրերի համար, որի սկզբունքները հիմք պետք է հանդիսանան դրանց կազմման կամ կատարելագործման ժամանակ:

2) Շրջակա միջավայրի ոլորտն իր էությունը, մասշտաբներով և սպեցիֆիկայով ընդգրկում է բավականին տարբեր ուղղություններ, դրա համար էլ համապատասխան ուղղությունների կամ բնագավառների զարգացման ծրագրերի կազմման համար անհրաժեշտ և հիմնավորված պահանջ է հանդիսանում շրջակա միջավայրի ոլորտում ռազմավարության առկայությունը՝ որպես ընդհանուր շրջանակային փաստաթղթի:

3) Էստոնիայի շրջակա միջավայրի բնագավառի մինչև 2030թվականի ռազմավարությունն իրեն նպատակն է սահմանում որոշել բնական միջավայրի բարվոք վիճակի պահպանության համար անհրաժեշտ հեռանկարային զարգացման ուղղությունները, միաժամանակ ելնելով կապերից, որոնք առկա են շրջակա միջավայրի սոցիալ-տնտեսական ոլորտի միջև, ինչպես նաև հաշվի առնելով այդ

ոլորտի ազդեցությունը շրջակա բնության և մարդու վրա:

4) Քանի որ Էստոնիայի շրջակա միջավայրի բնագավառի ռազմավարությունն երկարաժամկետ է (25 տարի), ապա մյուս բնագավառների զարգացման ծրագրերի արդիականացման կամ կատարելագործման ժամանակ հնարավորություն է առաջանում հաշվի առնել շրջակա միջավայրի բնագավառի ռազմավարությունում բերված պատճառահետևանքային կապերը և ընտրել նախընտրելի միջոցները (գործունեության ուղղությունները):

5) Զարգացման հեռանկարային նպատակներին հասնելու համար անհրաժեշտ գործունեության ուղղություններին հետամուտ լինելը, ոչ միայն իր դրական ազդեցությունն է ունենում ներկա ժամանակահատվածում և հեռանկարում տարբեր պետական սեկտորի վրա, այլ նաև ենթադրում է օրենսդիր և գործադիր իշխանությունների գոծողությունների հաջորդականություն և համաձայնեցվածություն:

ԱՆՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Ներկայումս միջազգային հանրությունը ձեռնարկում է զգալի ջանքեր նպատակաուղղված բնապահպանական հիմնախնդիրների լուծմանը: Խստացվում է բնապահպանական օրենսդրությունը, ակտիվ ներդրվում են բնական ռեսուրսների աքստացմանը և շրջակա միջավայրի աղտոտման բացասական հետևանքների նվազեցմանը նպատակաուղղված կանխարգելիչ միջոցներ, հասարակության կայուն սոցիալ-տնտեսական զարգացումն ապահովելու համար որոշումներ ընդունելիս հաշվի են առնվում բնապահպանական հարցադրումները:

Բնապահպանական լարվածությունը մեղմելու համար անհրաժեշտ է մշտապես գնահատել տնտեսական գործունեության հետևանքների ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, ինչպես փաստացի, այնպես էլ ծրագրավորվող, և փնտրել անբարենպաստ ազդեցության հնարավոր կանխարգելման նպաստող օպտիմալ լուծումներ, որոնց հետևանքն են հանդիսանում շրջակա միջավայրի բացասական

փոփոխությունները:

Պլանավորման և նախագծման փուլում որոշումների ընդունման գործընթացում էկոլոգիական բաղադրիչի հաշվի առնելն ավելի էժան է նստում, քան կանխարգելիչ միջոցառումների իրականացումը, պատճառվող տնտեսական վնասի փոխհատուցումը:

Քանի որ ցանկացած տնտեսական գործունեություն կապված է բնական ռեսուրսների օգտագործման հետ և այս կամ այն չափով բնութագրվում է շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցությունով, ապա տնտեսապես նպատակահարմար է դրա էկոլոգիական վտանգները վերլուծել ռազմավարական փաստաթղթերի մշակման փուլում և բազմակողմանի գնահատել զարգացման բոլոր հնարավոր այլընտրանքային տարբերակները:

Բնապահպանության ռազմավարական պլանավորումն ունի որոշակի առանձնահատկություններ, որոնք պայմանավորված են պլանավորման օբյեկտի առանձնահատկություններով՝

- 1) պլանավորման օբյեկտ են հանդիսանում հասարակական-արտադրական և բնական գործընթացների փոխազդեցության արդյունքները,
- 2) այն բնութագրվում է բնության վրա ազդեցության ձևերի և դրանց կիրառման հետևանքների բազմազանությամբ,
- 3) առավելագույնս տարածաշրջանային բնույթով,
- 4) ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ կտրվածքով շրջակա միջավայրի աղտոտման սոցիալական ազդեցությունների հաշվառման

անհրաժեշտությունով: Աղտոտման սոցիալական հետևանքների մոտակա ժամանակահատվածի և ավելի ճշգրիտ կանխատեսվող արդյունքները հնարավոր է հաշվի առնել ռազմավարական պլանավորման ժամանակ աղտոտման տնտեսական վնասների հաշվարկման միջոցով: Ավելի բարդ խնդիր է շրջակա միջավայրի աղտոտման երկարաժամկետ և դժվար կանխատեսելի (կլիմայի գլոբալ

20

փոփոխություն, աղտոտումների գենետիկ հետևանքներ և այլն) ազդեցությունների գնահատումը:

Բնապահպանության ռազմավարական պլանավորումն ենթադրում է համակարգային վերլուծության մեթոդների կիրառումը և ծրագրերի մշակումն ամբողջ երկրի ու տարածաշրջանների կտրվածքով: 23. Ռազմավարական պլանավորումը շղթայական բարդ համակարգ է, որը ներառում է պլանավորման գործընթացներ, որոնք միավորված են հաշվի առնելով տնտեսական, էկոլոգիական, տեխնիկական և կազմակերպչական պահանջները և սահմանափակումները: Ռազմավարական պլանավորումն ենթադրում է ապագայի սցենարներների կանխատեսումներ, որոնք պետք է կիրառելի լինեն շահագրգիռ բոլոր կողմերի համար: Այն իրենից ներկայացնում է էկոլոգիապես ուղենշված նախագծման համակարգ:

Բնապահպանական իրավիճակի արմատական փոփոխությունները երկրում հնարավոր է միայն ակտիվ բնապահպանական քաղաքականության իրականացման միջոցով: Խնդրո առարկա հարցի արմատական լուծման նախընտրելի տարբերակն է առանձին <<բնապահպանական խնդիրների ռազմավարական պլանավորման մասին>> ՀՀ օրենքի ընդունումը կամ մշակվելիք <<էկոլոգիական քաղաքականության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում <<Բնապահպանական խնդիրների ռազմավարական պլանավորում>> գլխի նախատեսումը, որով կսահմանվեն՝

1) կարգավորման առարկան

2) հիմնական հասկացությունները

3) բնապահպանական խնդիրների ռազմավարական պլանավորման հիմնական սկզբունքները,

4) բնապահպանական խնդիրների ռազմավարական պլանավորման ժամանակահատվածները, պլանավորման մեխանիզմները,

5) բնապահպանական ռազմավարական ծրագրերի (պլանների) կապը մյուս ռազմավարական ծրագրերի հետ,

6) բնապահպանական ռազմավարական ծրագրերի (պլանների) իրականացման մոնիտորինգի և գնահատման սկզբունքները և ընթացակարգերը,

7) բնապահպանական ռազմավարական ծրագրերի (պլանների) մշակողների և իրականացնողների պատասխանատվության և հաշվետվողականության կարգերը,

8) ռազմավարական փաստաթղթերի թափանցիկության և հրապարակայնության ապահովման ընթացակարգերը:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ, ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑՈՒՄ



Բնապահպանական-Էկոլոգիական գիտակցության ձևավորումը

Բնապահպանական կրթության ծրագիրը սովորողների համար հանդիսանում է կոնկրետ մարմնավորում, որը էկոլոգիական դաստիարակության հետ կապված ուսումնական պրակտիկան է, որն իրականանում է դպրոցներում: Բացի ծրագրի բովանդակության հիմնական հասկացություններից և արժեքներից, ներկայիս մոդելը արժեքավորվում է նաև առաջնային գործունեությամբ՝ կրթական վիճակ, լավագույն փորձ, տեխնիկա, ձևեր, գործիքներ, արտադրական տեխնոլոգիաների առանձնահատկություններ:

Բնապահպանական կրթության նպատակն է զարգացնել պատասխանատու վերաբերմունք շրջակա միջավայրի նկատմամբ, որի կառուցվածքի հիմքը բնապահպանական գիտակցության զարգացումն է: Սա ենթադրում է, որ բարոյական և բնապահպանական սկզբունքները բնության կառավարման և խթանման գաղափարների օպտիմալացման, ակտիվ ուսումնասիրության արդյունք է: Ճիշտ օգտագործելով տարբեր ուսուցման մեթոդներ՝ դաստիարակում ենք էկոլոգիապես գրագետ և ազնվաբարո մարդ :

Նպատակը բնապահպանական կրթությունն է, որի ուսուցման ժամանակ առաջ են քաշվում հետևյալ խնդիրները՝

1. կրթական

- Գտնել համակարգի բնապահպանական խնդիրների մասին և առաջադրել արդի լուծման ճանապարհներ,
- ձևավորել էկոլոգիապես ձայնային վարքի ու գործունեությամբ և առողջ ապրելակերպով անհատ,

2. զարգացող

զարգացման մտավոր և գործնական հմտությունների ուսուցում, միջավայրի գնահատում և բարելավում, ձգտում ակտիվ աշխատանքի և շրջակա միջավայրի պաշտպանության զարգացման համար:

- Խելացի (կարողանալ վերլուծել բնապահպանական իրավիճակներ), հուզական (վերաբերմունքը բնության հանդեպ՝ որպես համամարդկային արժեք), բարոյական (կամքն ու հաստատակամությունը, պատասխանատվությունը):



Կազմակերպման յուրաքանչյուր ձև սովորողների հետ ուսուցման գործընթացում խթան է հանդիսանում, զարգացնում տարբեր տեսակի ճանաչողական գործունեություններ: Այլ աղբյուրներից տեղեկությունները թույլ են տալիս կուտակել և բացահայտել խնդրի էությունը, ստեղծականությունը, թույլ են տալիս, որպեսզի անհատը իրական ներդրում ունենա ուսումնասիրության և էկոհամակարգերի խթանման գործընթացում:

Բնապահպանական հայեցակարգի ձևավորումը դպրոցներում, սովորողների մոտ «Մարդը և աշխարհը» գաղափարախոսության մեջ տալիս է ուժեղացված էկոլոգիական հասկացություններ, հստակեցնում է զգալի թվով վառ ու մատչելի օրինակներով: Մկսած «Ես և շրջակա աշխարհը» առարկայի առաջին դասից՝ կապ է ստեղծվում հասարակության և բնության միջև, որը դառնում է անբաժանելի օրգանական ամբողջություն, իսկ ինքը՝ սովորողը, այդ ամբողջության մի մասնիկը: Սա հնարավորություն է տալիս վաղ հասակից ստեղծել մանկական ամբողջական բարոյական և էկոլոգիական գաղափարներով անհատ, որը

պատկերացնում է մարդու ազդեցությունը շրջակա միջավայրի հանդեպ՝ թե՛ դրական և թե՛ բացասական իմաստով:

Երեխաները ստանում են հատուկ գիտելիքներ բույսերի և կենդանիների մասին: Սովորողների համար մատչելի կերպով պետք է բացահայտվեն հակասությունները առկա հասարակության և բնության միջև: Սովորողներին պետք է ծանոթացնել իրական բնապահպանության առջև ծառայած խնդիրներին: Ուսումնասիրելով «Էկոլոգիա» առարկան իր խորությամբ՝ անհրաժեշտ է զարգացնել միջառարկայական կապը կենսաբանություն և աշխարհագրություն առարկաների միջև, տալ ճիշտ ձևակերպում բնապահպանության, էկոլոգիական շղթայի (պարենային կապը օրգանիզմների), բնապահպանական, էկոլոգիական աղետների մասին:

Դիմելով պատմության օգնությանը (հասարակություն-բնություն ներդաշնակ փոխազդեցությունը տեսականորեն հիմնավորելու համար), ուսուցիչը ներկայացնում է գիտական պատճառներ բնությունը պահպանելու, ինչպես կոնկրետ երկրի, այնպես էլ աշխարհի մակարդակով: Իմացական գործունեությունը խթանում են այնպիսի իրավիճակներ, երբ անհրաժեշտ է բարոյական որոշում կատարել, և այդ իրավիճակները նպաստում են սովորողների արժեհամակարգի ձևավորմանը: Ակտիվանում է նաև ձգտումը՝ գեղագիտական զգացմունքները ստեղծագործական միջոցներով արտահայտելու (նկարչության, բանաստեղծության միջոցով): Արվեստին բնորոշ սինթետիկ մոտեցումը և զգայականությունը դեպի իրականությունը հատկապես կարևոր են բնության պահպանման շարժառիթները զարգացնելու համար:

Անհրաժեշտ է նաև ուսուցանել ամենահարմար մեթոդները՝ վերլուծելու և կարևորելու բնապահպանական արժեքները, շահերն ու կարիքները, նկարչության փորձերի և բնապահպանական դիտարկումների, դասավանդողի հետզրույցների, փաստերի, գործիչների կարծիքների միջև համեմատություն անցկացնելով՝ կառուցել սեփական վերաբերմունք խնդիրների նկատմամբ:

Բնապահպանական ուղղվածություն տվող ոչ ավանդական դասաժամերի կազմակերպման ձևերի թվում են դասը որպես տոն և թեմատիկ դասերը («Անտառի տոն», «Ծառի ու ծաղկի տոն», «Պահպանիր բնությունը» միջոցառումներ): Այսպիսի դասերը սովորողների մեջ ձևավորում են ակտիվ քաղաքացիական դիրքորոշում հայրենի բնության նկատմամբ:

Երեխաներին դուր են գալիս զանազան մրցույթները: Խաղային մրցույթները համադրվում են ճամփորդությունների և արշավների հետ: Ցածր դասարանի աշակերտները սովորում են խնամել տնային բույսերը, հետազոտում են լանդշաֆտային դիզայնի հնարավորությունները:

Բնապահպանական խնդիրները լուծելիս սովորողներն իրենց անկախ գործունեությամբ որոշակիմեթոդներ են ձեռք բերում, որոնք խրախուսում են նրանց գործունեությունը, նոր գաղափարների շուրջ ծնված լուծումներ ու բացահայտումներ են գտնում, զարգացնում են բանավիճելու մեթոդիկան, որոնք էլ իրենց հերթին նպաստում են անհատական հարաբերությունների ձևավորմանը, սովորողների խնդիրների, տեղական ծանոթ, իրական միջավայրի պայմանների համար հնարավոր լուծումներ որոնելու, գտնելու:

Դասի արդյունավետությունը աճում է մուլտիմեդիային պրեզենտացիաների շնորհիվ, որոնք ուղեկցում են, լուսաբանում ուսուցչի կամ սովորողի բացատրությունները

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քաջ հայտնի է, որ մարդը գոյատևում և ապահովում է հասարակական առաջընթացը օգտվելով շրջակա բնությունից, օգտագործելով նրա ռեսուրսները: Դրա շնորհիվ հասարակության և շրջակա բնության միջև մշտական նյութափոխանակություն է կատարում: Մարդը մշապես բնությունից ինչ-որ բան վերցնում և ինչ-որ բան տալիս է: Նախինում, երբ աշխարհի բնակչությունն այսքան շատ չէր և տեխնիկան ու արտադրությունն էլ այսքան զարգացած չէին, մարդիկ վերցնում էին բնությունից ինչ կարող էին, չմտահոգվելով հետևանքների մասին: Մարդկանց վերաբերմունքը բնական միջավայրի նկատմամբ զուտ սպառողական էր: Բայց դա բնական միջավայրին էական վնաս չէր հասցնում: Բնական միջավայրը լուրջ որակական փոփոխություններ չէր կրում: Նա ինքնազարգացման ու ինքնավերականգնման միջոցով բուժում էր մարդու հասցրած վնասները և պահպանվում էր իր որակը:

Այժմ վիճակն ամբողջովին այլ է: Մարդկանց միջամտությունը բնական միջավայրին այնպիսի ծավալներ է ընդունել, որ նրա ինքնազարգացման ընթացքը խախտվել է: Եվ դա առաջին հերթին այն պատճառով, որ բնակչությունն ու նյութական արտադրությունը աճում են վիթխարի չափերով և աննախադեպ թափով:

Գիտնականների կարծիքով, եթե բնօգտագործման և բնական միջավայրի աղտոտման ներկա ուղղվածությունն ու տեմպերը պահպանվեն, ապա հարյուրամյակներ, գուցե և տասնամյակներ հետո մեր մոլորակն այլևս պիտանի չի լինի բնակության համար: Մարդկային հասարակության ինքնատչնչացման վտանգը կդառնա իրական:

Մարդկությանը փրկելու գլխավոր միջոցը բնօգտագործման և բնապահպանության կտրուկ բարելավումն է, էկոլոգիական անվտանգ զարգացումը ինչպես համաշխարհային, այնպես էլ առանձին պետությունների, ազգերի, համայնքների ու անհատների մակարդակով:

Այսպիսով, բնության նկատմամբ մարդկանց վերաբերմունքի արմատական փոփոխությունը դառնում է ժամանակի հրամայականը:

Ամեն մի անհատի և հասարակության ամբողջությամբ ոչ միայն պետք է գիտակցեն այդ վտանգը, այլև իմանան այն կանխելու միջոցները, ճանաչեն բնության օրինաչափությունները և սովորեն բնության հետ ներդաշնակ ապրելու արվեստը:

ՕԳՏԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Ասիական Զարգացման Բանկ (ԱԶԲ) 2012.

Հայաստան քաղաքականության ֆորում. 2010. Հայաստանի շրջակա միջավայրի վիճակը (<http://www.pfarmeria.org/document/state-armenias-environment> :

Էկոդիտ Ինկ. Inc. 2009. Հայաստանի Կենսաբազմազանության վերլուծության արդիականացում: Զեկույց պատրաստված Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության համար (http://pdf.usaid.gov/pdf_docs/PNADP442.pdf): 5 Բ. Լապլանտ, Ս. Մեյսներ և Հ. Վանգ. 2005. Շրջակա միջավայրը որպես Մշակութային ժառանգություն. Հայկական Սփյուռքի պատրաստականությունը վճարել Հայաստանի Սևանա լճի պահպանության համար: Համաշխարհային Բանկ Քաղաքականության հետազոտության աշխատանքային փատաթուղթ. No. 3520: 6 Համաշխարհային Բանկ. 2005. Բնական աղետների թեժ կետերը: Ռիսկի գլոբալ վերլուծություն. Վաշինգտոն:

Հայաստանի Կլիմայի փոփոխության տեղեկատվական կենտրոն. Կլիմայի փոփոխության հետևանքները Հայաստանում. (<http://www.nature-ic.am/en/consequences>). ՄԱԿ-ի կլիմայի փոփոխության կոնվենցիայի շրջանակում երկրորդ ազգային հաշվետվությունը (2010) մեջբերում է կլիմայի փոփոխության վերաբերյալ մի փոքր տարբերվող տվյալներ (http://www.nature-ic.am/wp-content/uploads/2013/10/SNC_final_eng_01.09.10.pdf): Հայաստանի Կառավարություն. 2014. Հայաստանի Զարգացման Ռազմավարություն 2025. Երևան (Ապրիլ)

Հայաստանի Կառավարություն. 2014. Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագիր. Երևան (Մայիս 2014): ԱԶԲ, 2007. Նախագահի զեկույց և երաշխավորություն Տնօրենների խորհրդին. Հայաստանի Հանրապետությանն առաջարկվող վարկ՝ Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի ծրագրի համար.

Մանիլա . ԱԶԲ, 2012. Նախագահի զեկույց և երաշխավորություն Տնօրենների խորհրդին. Հայաստանի Հանրապետությանն առաջարկվող լրացուցիչ

Ֆինանսավորում՝ Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի ծրագրի համար.
Մանիլա: ԱԶԲ, 2012. Նախագահի զեկույց և երաշխավորություն Տնօրենների
խորհրդին. Հայաստանի Հանրապետությանն առաջարկվող բազմափուլ
Ֆինանսավորման գործիք՝ Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի
համար. Մանիլա:

Բնապահպանական կրթությունը դպրոցում- Ա. Եղյան

Բնօգտագործում և բնապահպանություն- Ա. Գասպարյան , Ռ. Մկրտչյան, Լ. Վալեսյա